ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2015թ. 3-րդ եռամսյակ/

1. Ստացվել են նամակներ ընդամենը	411
որից՝	
աջակցություն	406
առաջարկություն	1
հարցում	1
բողոք	*3*
այդ թվում՝	
կրկնակի	3
կոլեկտիվ	6
3. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	3
կոմունալ-կենցաղային	12
շինարարական	2
արդձեռ/տրանսկապ/	1
գյուղատնտեսական	4
բնութ. պահպանութ.	1
առևտրի	1
կենսաթոշակի և նպաստի	2
առողջապահության	59
կրթական և մանկ.հիմն	20
գիտութ.կուլտուրա	1
ֆինանսական	217
օրենսդրական	1
քաղ. և որդեգրման	3
աշխ.տեղ և հաշվառման	20
հողհատկացում և հողօգտ.	1
միգրացիոն ծառ. վերաբերյալ	31
ապարատային	18
այլ հարցեր	14

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2015 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2015 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 411 դիմում, որից 406-ը՝ աջակցության խնդրանքով, 3-ը՝ բողոք, 1-ը՝ առաջարկություն, 1-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 21 դիմումներից 19-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 20 դիմումներից դրական լուծում է ստացել 3-ը, մյուսները վերցվել են հաշվառման: Միգրացիոն ծառայության վերաբերյալ դրական լուծում է ստացել 33 քաղաքացու դիմում:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 16 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 217 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 216 հոգու: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 21 քաղաքացիներից բավարարվել է 19-ի խնդրանքը, 2 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 35 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2015 թվականի երրորդ եռամսյակում կատարվել է 195 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: